Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐԵՎԻԿ ԽՆԿՈՅԱՆԻ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արևիկ Խնկոյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա, նոյեմբերի 5-ից 8-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհուրդ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 34-րդ նիստին և դրա շրջանակներում կազմակերպված «ԱՊՀ ինովացիոն ներուժը. տնտեսության իրական հատվածներում և սոցիալական ոլորտում գիտատեխնիկական գործունեության արդյունքների օգտագործման լավագույն փորձը» խորագրով միջազգային գիտաժողովին:

6. Քննարկված թեմաները

1. ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 33-րդ նիստին կայացված որոշումների իրականացումը,
2. ԱՊՀ մասնակից պետությունների՝ մինչև 2030 թվականը ինովացիոն ոլորտում համագործակցության միջպետական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր),

3. ԱՊՀ երկրներում պետական մարմինների, բիզնեսի, գիտության և կրթության միջև ուղղահայաց և հորիզոնական կապերի ստեղծման հնարավորությունները, մեխանիզմները և գործիքները,

4. Ծրագիրը՝ որպես թվայնացման, նորարարության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության և փոխգործակցության հարթակ,

5. ԱՊՀ շրջանակներում թվային տնտեսության համար կադրերի պակասության խնդիրը, կրթական կազմակերպությունների և բիզնեսի կողմից ներկայացված կադրային պահանջարկը, բարձր որակավորում ունեցող կադրերի գործնական ուսուցման հնարավորությունները,

6. Ներդրումների և բիզնեսի աջակցության ներգրավում՝ կլաստերների միասնական ցանցերի ստեղծման համար (բժշկական կլաստերի օրինակով),

7. Գիտելիքի փոխանցման կենտրոնները, որպես ԱՊՀ երկրների համար բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման գործիք,

8. Գիտության և բիզնեսի միջև համագործակցությունը և դրա հաջողված օրինակները,

9. Համալսարանի նոր դերը՝ որպես բիզնեսի և հասարակության ներգրավման կենտրոն, ինչպես նաև սկսնակ հետազոտողների վերապատրաստումը և հարմարեցումը պետության և բիզների կիրառական խնդիրներին,

10. Այլ ընթացիկ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառման շրջանակներում հանդիպումներ են եղել ԱՊՀ գործադիր կոմիտեի, Ծրագրի օպերատոր ՌԴ «Սկոլկովո» հիմնադրամի, ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպությունների, ԱՊՀ երկրների գիտության և տեխնոլոգիաների ոլորտի պետական մարմինների և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 34-րդ նիստին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանը ելույթ ունեցավ՝ ըստ օրակարգի և ներկայացրեց տեղեկատվություն վերջին տարվա ընթացքում գիտության ոլորտում վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի մասին: Մանրամասն ներկայացրեց Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող միջոցառումներն ուղղված գիտության ոլորտի զարգացմանը, բարձրագույն կրթության և գիտության ինտեգրմանը, գիտական ինստիտուտներում և բուհերում առկա

ենթակառուցվածքների արդիականացմանը և գիտության ոլորտի աշխատակիցների աշխատանքի վարձատրության աճի ապահովմանը: Միաժամանակ ներկայացրեց Հայաստանում գիտության պետական ֆինանսավորման ծավալներն ու դրա համամասնությունը ՀՆԱ-ի մեջ:

Խորհրդի 34-րդ նիստին քննարկվել են նախորդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները, կայացված որոշումների իրականացման ընթացքը, ԱՊՀ մասնակից պետությունների մի քանի կազմակերպությունների համապատասխան ոլորտներում բազային կազմակերպության կարգավիճակ շնորհելու հարցերը:

Խորհրդի մյուս անդամները ներկայացրեցին գիտության և ինովացիաների ոլորտում իրենց երկրներում վարվող քաղաքականությունը և վերջին զարգացումները:

Գիտաժողովի ընթացքում եղան ելույթներ և շնորհանդեսներ՝ ԱՊՀ մասնակից պետությունների գիտության և տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչների կողմից:

Գիտաժողովին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնի պետ Արևիկ Խնկոյանը ներկայացրեց Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կազմակերպվող մրցութային ծրագրերն ուղղված կիրառական նշանակության և ինովացիոն ներուժ ունեցող հետազոտությունների իրականացմանը, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում ստացող գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական կադրերի մասնագիտական վերապատրաստմանը:

Քննարկվել են նաև մի շարք օրակարգային և աշխատանքային հարցեր:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 34-րդ նիստի հարցերը համաձայնեցվել են և ընդունվել:

Շարունակել իրականացնել ԱՊՀ մասնակից պետությունների՝ մինչև 2030 թվականը ինովացիոն ոլորտում համագործակցության միջպետական ծրագիրը՝ համաձայն իրականացման ժամանակացույցի:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություն է ներկայացվել հնարավորինս կիրառել Ծրագրի կողմից առաջարկվող հնարավորությունները՝ ԱՊՀ մասնակից պետությունների միջև համագործակցությունը զարգացնելու և ծրագրի միջոցառումները համատեղ իրականացնելու նպատակով:

Առաջարկություն է ներկայացվել նաև դիտարկել գիտության տարբեր ոլորտներում համատեղ կլաստերների, ինչպես նաև կադրային շտեմարանների ստեղծման հնարավորությունները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արևիկ Խնկոյան
13.11.2024թ.